ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2023 թվականի թիվ 58-Ա

ք.Երևան

«ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի մայիսի 23-ին, իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 23 վարչական վարույթի նյութերը՝ պարզեց.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս արձանագրվել է «ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ ցանցային օպերատոր) կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ընթացքում Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթների պահանջների խախտման փաստ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2023 թվականի մայիսի 23-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 19-Ա հրամանի համաձայն օպերատորների գործունեության տեղում դիտարկման արդյունքների վերաբերյալ 2023 թվականի մայիսի 23-ին կազմված արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Վերը նշված արձանագրությանը ծանոթացել և այն տեղում ստորագրել է ցանցային օպերատորի ներկայացուցիչ՝ «ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի տնօրեն Կ.Ավագյանը և արձանագրության վերաբերյալ առարկություններ չի հայտնել:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է նաև «ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի գործունեության

մշտադիտարկման արդյունքների արձանագրությունում նշված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից 2023 թվականի մարտի 16-ին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի **ցանկի համադրություն**, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

«ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում, բացի փաստացի վերահաղորդվող ծրագրերից, առկա են նաև՝ «Paramaount Comedy», «Nick Toons», «Nickelodeon», «Paramount channel», «MTV», «MTV Roks», «VH1 classic», «Охотник и рыболов HD», «Рыболов», «Зоо TV SD», «Еврокино», «Муз», «Драйв», «Телепутешествие HD», «Discovery Channel», «Animal Planet», «TLC», «Eurosport 1HD», «Eurosport 2HD», «НТВ-СЕРИАЛ», «НТВ-СТИЛЬ», «Удар», «5 Կանալ 1», «Բրիջ ՏՎ Ռուսկիյ Խիտ», «Բրիջ ՏՎ Դէլյուքս», «Բրիջ ՏՎ ՖՐԵՇ», «ԽաղԱլիք», «Արմենիա նյուզ 24», «Երկիր Մեդիա», «Поехали», «Загородная жизнь», «Ваш успех», «Моя планета SD», «История SD», «Живая Планета SD», «Сарафан SD», «Русская ночь», «Матч!Планета» և «Живая природа» տեսալսողական ծրագրերը, որոնք արձանագրություն կազմելու պահին չեն վերահաղորդվել, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները:

Միաժամանակ պարզվել է, որ «ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում առկա չեն «Shoghakat TV», «Հ1», «Շանթ», «Ա Թիվի», «Բուն tv», «Ֆրի նյուզ», «5-րդ ալիք», «Կենտրոն HD», «Նոր Հայաստան», «Հ1 լրատվական», «21 HD», «Россия РТР», «Россия К», «Արմենիա», «Կոտայք TV», «5-րդ ալիք+», «Euronews», «Мир 24», «Любимое кино», «Мужское кино», «Наше новое кино», «Детский мир», «Վիվառո Arena», «Վիվառո սպորտ», «Bridge Rock», «Дикий. охота и рыбалка», «Дикая рыбалка», «Кухня ТВ» և «Vivaro Sports +» տեսալսողական ծրագրերը, որոնք փաստացի վերահաղորդվել են արձանագրությունը կազմելու պահին:

Վերոնշյալը պարունակում է **Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով** սահմանված պահանջների խախտման հատկանիշներ, այն է՝

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի մայիսի 26-ին, թիվ Ե/07/295-23 գրությամբ ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ցանցային օպերատորը 2023 թվականի մայիսի 29-ին նշված գրության վերաբերյալ ներկայացրել է իր պարզաբանումներն ու բացատրությունները՝ հայտնելով, որ համաձայն չէ վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ ծանուցման մեջ նշված դիրքորոշումների հետ, կից ներկայացնելով նաև որոշ տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագրեր, այդ պայմանագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրեր և այլ փաստաթղթեր՝ պարզաբանելով, որ ծանուցման մեջ

նշված ալիքները 2023 թվականի մարտի 16-ին ներկայացված ցանկում ներառված են, նշել է որ ունեն այդ ալիքների վերահեռարձակման պայմանագրեր և դրանց վերահաղորդումն օրինական է՝ մասնավորապես.

1. Ցանցային օպերատորը նշել է, որ 2023 թվականի մարտի 16-ին ներկայացված ցանկում ներառված են ալիքները այն անվանումներով, որով կնքված է պայմանագիրը: ***<u>Այսպես ըստ ցանցային օպերատորի</u>.***

- «Дикий. охота и рыбалка» ալիքը պայմանագրով «Охотник и рыболов HD» ալիքն է, որը ներառված է ցանկում,
- «Дикая рыбалка» ալիքը պայմանագրով «Рыболов» ալիքն է, որը ներառված է ցանկում,
- «Мир 24» ալիքը պայմանագրով «Мир ТВ» ալիքն է, որը ներառված է ցանկում,
- «Мужское кино» ալիքը պայմանագրով «Мужской» ալիքն է, որն ըստ ցանցային օպերատորի ևս ներառված է ցանկում:

2. Ցանցային օպերատորն իր առարկություններում անդրադարձել է նաև «Vivaro Sports +», «Վիվառո Arena», «Վիվառո սպորտ», «Euronews», «Россия РТР», «Россия К», «Արմենիա», «Կոտայք TV», «5-րդ ալիք+», «Նոր Հայաստան», «Հ1 լրատվական», «5-րդ ալիք», «Կենտրոն HD», «Ֆրի նյուզ», «Բուն tv», «Shoghakat TV», «Հ1», «Շանթ», «Ա Թիվի» հեռուստաալիքներին, պատճառաբանելով, որ այդ բոլորը տեղական ալիքներ են և չեն ներառվել ցանկում, քանի որ իրավունք ունեն ցուցադրելու և որ ցանկում ներառված են միայն այն ալիքները, որոնք ցուցադրվել են պայմանագրով նախատեսված կարգով: Կից ցանցային օպերատորը ներկայացրել է պայմանագրեր և խնդրել վերանայել ցանկը:

Հանձնաժողովը ուսումնասիրել է ցանցային օպերատորի կողմից ներկայացված պարզաբանումներն ու բացատրությունները և ներկայացված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»,** «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, **իսկ նույն հոդվածի 8-րդ, 9-րդ և 11-րդ մասերը սահմանում են.**

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, **իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:»**

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանումով՝

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 65 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել և հետազոտել է ցանցային օպերատորի կողմից ներկայացված պարզաբանումներն ու փաստաթղթերը, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

1. Ցանցային օպերատորի կողմից նախանշված «Дикий. охота и рыбалка» տեսալսողական ծրագիրը, որն ըստ իրեն հանդիսանում է նույն «Охотник и рыболов HD» տեսալսողական ծրագիրը՝ չի համապատասխանում իրականությանը:

Ըստ այս հեռուստաալիքների պաշտոնական կայքէջերի դրանք հանդիսանում են լիովին տարբեր տեսալսողական ծրագրեր՝ առանձին անվանումներով, տարբերանշաններով և առանձին լիցենզիոն պայմանագրերի համարանիշերով՝ **այսինքն «Дикий. охота и рыбалка»** /լիցենզիոն համար: ТВ №28701/ **մեկ տեսալսողական ծրագիր է**, **«Охотник и рыболов HD»** /լիցենզիոն համար: 22831/ **լիովին այլ** և այս երկուսի նույնականացումը անհնար է:

Այսպես, ցանցային օպերատորը մշտադիտարկման պահին փաստացի վերահաղորդել է «Дикий. охота и рыбалка» ալիքը, ***որն ի դեպ ներառված չէ ցանկում***, սակայն բացատրություններով ներկայացրել է «Охотник и рыболов HD» վերաբերյալ կնքված **008-05/23 Լիցենզիոն** 04.10.22թ. պայմանագիր:

2. Ցանցային օպերատորը նույն կերպ անդրադարձել է «Дикая рыбалка» տեսալսողական ծրագրին, պնդելով որ դա նույն «Рыболов» տեսալսողական ծրագիրն է, որը ներառված է ցանկում:

Համադրելով վերը նշված տեսալսողական ծրագրերի պաշտոնական կայքէջերի տեղեկատվությունը պարզ է դառնում, որ դրանք ևս տարբեր տեսալսողական ծրագրեր են՝ նույնպես առանձին անվանումներով, տարբերանշաններով և առանձին լիցենզիոն պայմանագրերի համարանիշերով:

Այսպես, ցանցային օպերատորը մշտադիտարկման պահին փաստացի վերահաղորդել է «Дикая рыбалка» տեսալսողական ծրագիրը, ***որը ներառված չէ ցանկում:***

3. Ցանցային օպերատորն իր բացատրություններում նշել է նաև «Мужское кино» տեսալսողական ծրագիրը պայմանագրով նույն «Мужской» տեսալսողական ծրագիրն է, որը ներառված է ցանկում:

Համադրելով վերը նշված տեսալսողական ծրագրերի պաշտոնական կայքէջերի տեղեկատվությունը պարզ է դառնում, որ դրանք ևս տարբեր են:

Այսպես, ցանցային օպերատորը մշտադիտարկման պահին փաստացի վերահաղորդել է «Мужское кино» տեսալսողական ծրագիրը, ***որը ներառված չէ 2023 թվականի մարտի 16-ին ներկայացված ցանկում***, սակայն բացատրություններով ներկայացրել է **28.04.2023 թվականին կնքված թիվ 008-05/23 Լիցենզիոն Համաձայնագիր**, որում ներառված են և «Мужской» և «Мужское кино» տեսալսողական ծրագրերը:

Այսինքն, ցանցային օպերատորի կողմից ցանկը Հանձնաժողով ներկայացնելուց հետո կնքվել է նոր համաձայնագիր, որում ներառված են երկու **տարբեր** տեսալսողական

ծրագրերն էլ, սակայն փոփոխությունների վերաբերյալ Հանձնաժողով տեղեկատվություն չի ներկայացվել՝ ինչն Օրենքի պահանջ է:

4. Ցանցային օպերատորն իր առարկություններում անդրադարձել է նաև «Vivaro Sports +», «Վիվառո Arena», «Վիվառո սպորտ», «Euronews», «Россия РТР», «Россия К», «Արմենիա», «Կոտայք TV», «5-րդ ալիք+», «Նոր Հայաստան», «Հ1 լրատվական», «5-րդ ալիք», «Կենտրոն HD», «Ֆրի նյուզ», «Բուն tv», «Shoghakat TV», «Հ1», «Շանթ», «Ա Թիվի» հեռուստաալիքներին՝ պատճառաբանելով, որ այդ բոլորը տեղական ալիքներ են և չեն ներառվել ցանկում, քանի որ իրավունք ունեն ցուցադրելու և որ ցանկում ներառված են միայն այն ալիքները, որոնք ցուցադրվել են պայմանագրով նախատեսված կարգով:

Միաժամանակ ցանցային օպերատորը ներկայացրել է իր կողմից «տեղական ալիքներ» համարվող տեսալսողական ծրագրերի հետ կնքված հետևյալ պայմանագրերը.

- 14.01.2022 թվականի «Россия 24» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագիր, որը գործում էր մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
- 05.09.2022 թվականի «Vivaro Sports +», «Վիվառո Arena», «Վիվառո սպորտ» տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագիր:
- 03.01.2022 թվականի «Euronews» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագիր:

Այսպես, ցանցային օպերատորի պատճառաբանությունները՝ այն մասին, որ տեղական ալիքները չեն ներառվել ցանկում, քանի որ ինքնին դրանց ցուցադրումը թույլատրելի է՝ ապա նշենք, որ **Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝** *սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:*

Այսինքն, Օրենքը չի նախատեսել բացառություններ ***տեղական և ոչ տեղական*** տեսալսողական ծրագրերի միջև, Օրենքի պահանջն է, ***որ ցանցային օպերատորները գործեն և վերահաղորդեն տեսալսողական ծրագրերը պայմանագրերի հիման վրա և Կարգավորող պետական մարմին ներկայացնեն այդ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:***

Հարկ ենք համարում նշել նաև, որ այդ նույն տրամաբանությամբ ցանցային օպերատորը չպետք է Հանձնաժողով ներկայացված ցանկում ներառեր նաև այլ տեսալսողական ծրագրերը՝ Օրինակ. «Նուռ ՏՎ», «Հ2», «Կինոման», «Ֆիլմզոն», «Հայ ՏՎ»:

Փաստենք, որ Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին: Հետևաբար, անգամ այն դեպքում եթե ցանցային օպերատորը ցանկը ներկայացնելուց հետո կնքել է նոր պայմանագրեր, ապա պարտավոր էր տեղեկացնել այդ մասին Կարգավորող պետական մարմնին:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթների պահանջները, Հանձնաժողովն ամրագրում է, որ ցանցային օպերատորը տեսալսողական ծրագրերը վերահաղորդելիս պարտավոր էր պահպանել Օրենքի առանձնահատկությունները սահմանող դրույթները:

Փաստենք, որ ցանցային օպերատորը 2021 թվականի հուլիսի 22-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում է իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել **Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով** սահմանված դրույթների պահանջները:

Վերը նշվածը բավարար հիմք է հանդիսանում Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումը արձանագրելու և ցանցային օպերատորի նկատմամբ պատասխանատվություն կիրառելու համար:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

«ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից Հանձնաժողով 2023 թվականի մարտի 16-ին ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում առկա չեն «Shoghakat TV», «Հ1», «Շանթ», «Ա Թիվի», «Բուն tv», «Ֆրի նյուզ», «5-րդ ալիք», «Կենտրոն HD», «Նոր Հայաստան», «Հ1 լրատվական», «21 HD», «Россия РТР», «Россия К», «Արմենիա», «Կոտայք TV», «5-րդ ալիք+», «Euronews», «Любимое кино», «Мужское кино», «Наше новое кино», «Детский мир», «Վիվառո Arena», «Վիվառո սպորտ», «Bridge Rock», «Дикий. охота и рыбалка», «Дикая рыбалка», «Кухня ТВ» և «Vivaro Sports +» տեսալսողական ծրագրերը, որոնք փաստացի վերահաղորդվել են 2023 թվականի մայիսի 23-ին մշտադիտարկման արդյունքում արձանագրությունը կազմելու պահին:

Փաստում ենք նաև, որ ցանցային օպերատորի ներկայացուցիչը ծանոթացել և տեղում ստորագրել է օպերատորների գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2023 թվականի մայիսի 23-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը և դրա վերաբերյալ առարկություններ չի հայտնել:

<u>Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն</u>՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

<u>Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն</u>՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների

խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) **տուգանք.**

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

<u>Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն</u>՝ Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Այսպես, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 60-րդ հոդվածի 8-րդ մասով, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39 հոդվածի 1-ին և 65 հոդվածի 1-ին մասերով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը.

ՈՐՈՇԵՑ

1. «ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ի նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վարչական տույժը, տուգանելով սահմանված 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

2. Ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ցանկը Հանձնաժողով ներկայացնել 10-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԿԱՐԵՆ ՔԱՋԻԿԻ ԱՎԱԳՅԱՆ» Ա/Ձ-ին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

22 հունիսի 2023թ.
ք.Երևան